Հաստատված է
«ԷՖՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
փակ բաժնետիրական ընկերության
միակ բաժնետիրոջ կողմից՝ 26.07.2023թ. N 07-23-2 որոշմամբ
Գործադիր տնօրեն՝ Վաչիկ Գևորգյան

26 հուլիսի 2023թ.

«ԷՖՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2023

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ԷՖՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հաճախորդների դասակարգման և տեղեկատվության փոխանակման կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) մշակված է Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության, մասնավորապես «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին (այսուհետ՝ Օրենք), դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ) կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը համապատասխան:

1.2. Սույն Կանոնակարգը կարգավորում է Ընկերության հաճախորդների դասակարգման պատշաճ գործընթացի իրականացումը, սահմանված դասակարգման չափանիշների պահպանումը, ինչպես նաև ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման շրջանակներում տրամադրվող և ստացվող տեղեկատվության փոխանակման գործընթացը:

1.3. Կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

Ներդրումային ծառայություններ. Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ծառայությունները,

Ոչ հիմնական ծառայություններ. Օրենքի 26-րդ հոդվածով սահմանված ծառայությունները,

Հաճախորդ. անձ, որը օգտվում է Ընկերության կողմից մատուցվող ծառայություններից,

Պայմանագիր. ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում Հաճախորդի և Ընկերության միջև կնքված փաստաթուղթ, որում ներառվում են տվյալ անձի արժեթղթերով և դրամական միջոցներով գործարքի կնքման և կատարման հետ կապված կողմերի իրավունքներն ու պարտականությունները,

Տեղեկատվության փոխանցման հուսալի միջոց. ցանկացած միջոց, որը Հաճախորդին հնարավորություն է տալիս ստանալ և պահպանել անձնապես իրեն ուղղված տեղեկատվությունը, և որը հետագայում հնարավորություն կտա այն լիարժեք օգտագործել և պահպանված տեղեկատվությունը վերարտադրել:

1.4. Սույն Կանոնակարգում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օրենքով և «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ով սահմանված նշանակությունը:

1.5. Ընկերության կողմից ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման շրջանակներում տեղեկատվության փոխանակումը և հաճախորդների դասակարգումը կարգավորվում է սույն Կանոնակարգով, եթե այլ բան սահմանված չէ տվյալ ծառայության մատուցման Ընկերության այլ ներքին կանոնակարգերով:

2. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

2.1. Նախքան ներդրումային ծառայությունների մատուցումը և ծառայությունների մատուցման Պայմանագրի կնքումը Ընկերությունը դասակարգում է հաճախորդներին՝

որպես պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ՝ ներդրումային ծառայություններից որևէ մեկի կամ բոլոր ծառայությունների մասով, կամ որևէ գործարքի կամ արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքների մասով:

2.2. Ընկերությունը հաճախորդներին դասակարգում է՝ հիմնվելով համապատասխան չափանիշների վրա, որոնք մանրամասն սահմանված են ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի հաստատած «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ում:

2.3. Ընկերության կողմից ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի հաստատած «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ով սահմանված չափանիշներով Հաճախորդի նախաձեռնությամբ վերջինիս պրոֆեսիոնալ դասակարգումը վավեր համարվելու նպատակով Ընկերությունը իրականացնում է Հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ գնահատում: Հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ վերջինիս գնահատումը պետք է հավաստիացնի, որ Հաճախորդը ներդրումային ծառայություններից օգտվելու, ներդրումային որոշում կայացնելու և դրանց հետ կապված ռիսկերն ընկալելու համապատասխան ունակություն և գիտելիք ունի: Կազմակերպությունների դեպքում գիտելիքի և փորձի վերաբերյալ գնահատումն իրականացվում է կազմակերպության այն ղեկավարի, աշխատակցի կամ անձի նկատմամբ, որն իրավասու է կազմակերպության անունից գործարքներ կնքել:

2.4. Հաճախորդների դասակարգման նպատակով վերջիններիս գիտելիքի և փորձի գնահատումը իրականացվում է հետևյալ ընթացակարգով.

2.4.1. Հաճախորդը լրացնում է «Ճանաչիր քո հաճախորդին» հարցաթերթիկը՝ համաձայն սույն Կանոնակարգի ՀԱՎԵԼՎԱԾ 1-ի:

2.4.2. Իրավաբանական անձ Հաճախորդի դեպքում ՀԱՎԵԼՎԱԾ 1-ը լրացվում է վերջինիս այն ղեկավարի, աշխատակցի կամ անձի կողմից, որն իրավասու է Հաճախորդի անունից գործարքներ կնքել:

2.4.3. Յուրաքանչյուր հաճախորդի «Ճանաչիր քո հաճախորդին» հարցաթերթիկի «Գիտելիքների և փորձի գնահատման թեստ» բաժնի արդյուքների հիման վրա կազմվում է Ընկերության գործադիր տնօրենի կողմից ստորագրված արձանագրություն/փաստաթուղթ (ՀԱՎԵԼՎԱԾ 2), որը ներառում է Հաճախորդի գնահատման արդյունքերը՝ պատշաճ հիմնավորմամբ: Հարցաթերթիկում պարունակվող յուրաքանչյուր հարց ունի պատասխանի մի քանի տարբերակ՝ գնահատման զրոյից հինգ միավորներով: Հարցաթերթիկի լրացման արդյունքներով 70 և ավելի միավոր հավաքելու դեպքում Հաճախորդը դասակարգվում է որպես պրոֆեսիոնալ, հակառակ դեպքում՝ որպես ոչ պրոֆեսիոնալ:

2.5. Նախքան պրոֆեսիոնալ հաճախորդների հետ ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելը կամ ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի հաստատած «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ով սահմանված չափանիշներով Հաճախորդի նախաձեռնությամբ վերջինիս որպես պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգելը Հաճախորդը համապատասխան գրավոր հայտարարություն է ներկայացնում Ընկերությանը համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ 3-ի, ինչպես նաև Ընկերությունը գրավոր տեղեկացնում է այդ Հաճախորդին այն մասին, որ վերոնշյալ կանոնակարգով սահմանված որոշակի պահանջներ չեն գործելու իր և Հաճախորդի փոխհարաբերություններում՝ ներկայացնելով այդ պահանջների էությունը:

2.6. Նախքան պրոֆեսիոնալ հաճախորդների հետ լեվերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելը կամ Հաճախորդին լեվերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների մասով պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգելը Ընկերությունը Հաճախորդին ծանուցում է տվյալ գործարքներին առնչվող ռիսկերի մասին: Տվյալ դեպքում հաճախորդները գրավոր հայտարարություն են ներկայացնում Ընկերությանն այն մասին, որ տեղյակ են լեվերիջով գործարքներին, այդ թվում՝ ֆորեքս գործարքներին առնչվող ռիսկերի մասին, ընդ որում՝ այս հայտարարությունն անհրաժեշտ է ներկայացնել համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ 7-ի:

2.7. Հաճախորդի համաձայնության դեպքում՝ Ընկերության նախաձեռնությամբ կամ Պրոֆեսիոնալ համարվող հաճախորդի նախաձեռնությամբ Ընկերությանը թույլատրվում է պրոֆեսիոնալ համարվող հաճախորդին վերաբերվել որպես ոչ պրոֆեսիոնալ և տվյալ հաճախորդի նկատմամբ կիրառել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջները:

2.8. Ընկերությունն իր և հաճախորդի միջև կնքվող պայմանագրում պարտադիր կերպով պետք է ներառի դրույթ, որի համաձայն նշվում է, որ եթե պրոֆեսիոնալ համարվող հաճախորդը կարծում է, որ ի վիճակի չէ գնահատել և կառավարել ներդրումային ծառայություններից կամ ներդրումներից բխող ռիսկերը, պրոֆեսիոնալ հաճախորդի պարտավորությունն է դիմել Ընկերությանը՝ իրեն որպես ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ վերաբերվելու համար, ինչը հնարավորություն կտա օգտվել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջներից:

2.9. Պրոֆեսիոնալ հաճախորդ համարվող անձը սույն կանոնակարգի 2.7 - 2.8 կետերի համաձայն Ընկերության կողմից դասակարգվում է ոչ պրոֆեսիոնալ Ընկերության հետ կնքված պայմանագրի հիման վրա: Պայմանագրում հստակ ամրագրվում է, թե արդյոք հաճախորդի ոչ պրոֆեսիոնալ դասակարգումը վերաբերում է ներդրումային ծառայություններից որևէ մեկին, բոլոր ծառայություններին, որևէ գործարքին, թե արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքներին:

2.10.Ընկերությունը «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ի պահանջներին համապատասխան հաճախորդներին պրոֆեսիոնալ դասակարգելիս գրավոր հարցում են կատարում վերջիններիս նաև որակավորված ներդրող համարվելու համաձայնության վերաբերյալ: Հաճախորդի համաձայնության դեպքում որակավորված ներդրող գրանցվելու, գրանցումից դուրս գալու, ինչպես նաև ՀՀ ԿԲ ներկայացվող պրոֆեսիոնալ կարգավիճակի դադարեցման, պայմանագրի լուծման և այլ տեղեկատվության փոփոխությունների վերաբերյալ հետագա գործընթացը իրականացվում է «Ներդրումային `ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ի և «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» կանոնակարգ 4/06-ի դրույթներին համապատասխան:

2.11.Ընկերությունը պրոֆեսիոնալ հաճախորդներին դասակարգելիս վերջինիս հետ պայմանագրում պարտադիր ներառում է դրույթ, համաձայն որի պրոֆեսիոնալ համարվող հաճախորդները պարտավոր են Ընկերությանը տեղեկացնել այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել հաճախորդի պրոֆեսիոնալ դասակարգման վրա: Եթե հաճախորդի կողմից տրամադրված կամ այլ կերպ Ընկերությանը հասանելի դարձած տեղեկատվության հիման վրա Ընկերության գնահատականով հաճախորդն այլևս չի բավարարում այն պայմաններին, որոնց հիման

վրա դասակարգվել է պրոֆեսիոնալ հաճախորդ, կամ եթե Ընկերությունը պարզում է, որ հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունները եղել են անարժանահավատ, Ընկերությունը անհապաղ դադարեցնում է հաճախորդի պրոֆեսիոնալ դասակարգումը, որի մասին 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է հաճախորդին:

3. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

3.1. *Հաճախորդներին տրամադրվող տեղեկատվությունը*

3.1.1. Ընկերության կողմից Հաճախորդին տրամադրվող տեղեկատվությունը պետք է հասկանալի լինի ներդրումների բնագավառում միջին մակարդակի գիտելիքների և փորձ ունեցող մարդկանց համար, այդ թվում լինի պարզ, անկողմնակալ և չլինի ապակողմնորոշիչ:

3.1.2. Նախքան ներդրումային ծառայությունների մատուցումը և ծառայությունների մատուցման Պայմանագրի կնքումը Ընկերությունը Հաճախորդին տրամադրում է տեղեկատվություն հետևյալի մասին.

3.1.2.1. Ընկերության և նրա կողմից մատուցվող ծառայությունների մասին,

3.1.2.2. արժեթղթերի մասին,

3.1.2.3. գործարքների կնքման վայրի (միջոցի) մասին (ֆոնդային բորսա, այլ կարգավորվող շուկա կամ չկարգավորվող շուկա),

3.1.2.4. համապատասխան ծախսերի և միջնորդավճարների մասին,

3.1.2.5. ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկություններ:

3.1.3. Տրամադրվող տեղեկատվությունը Հաճախորդին պետք է հնարավորություն տա հասկանալու իրեն առաջարկվող կոնկրետ ներդրումային ծառայության և արժեթղթերի էությունը և դրանց հետ կապված ռիսկերը: Այդ տեղեկատվությունը ներառված է Հաճախորդներին ներկայացվող Ընկերության Տեղեկատվական ամփոփագրում:

3.1.4. Իր և իր կողմից մատուցվող ծառայությունների մասին Ընկերությունը Հաճախորդին տրամադրում է հետևյալ տեղեկությունները՝

3.1.4.1. Ընկերության անվանումը և կապի միջոցները,

3.1.4.2. տեղեկություններ թե ինչ լեզուներով Հաճախորդը կարող է կապ հաստատել Ընկերության հետ և ստանալ փաստաթղթեր և այլ տեղեկություններ,

3.1.4.3. միմյանց հետ կապ հաստատելու և տեղեկատվություն փոխանակելու մեթոդները, ինչպես նաև Պատվերների ընդունման և հաղորդման կարգը,

3.1.4.4. այն հիմքերը, որոնց համաձայն Ընկերությունն իրավասու է մատուցել ներդրումային ծառայություններ, ինչպես նաև Ընկերությանը լիցենզավորած և (կամ) գրանցած իրավասու մարմնի անվանումը և կապի միջոցները,

3.1.4.5. տեղեկություններ հաճախորդներին ներկայացվող հաշվետվությունների, դրանց ներկայացման հաճախականության և ժամկետների, ինչպես նաև ներկայացման կարգի մասին,

3.1.4.6. Ընկերության կողմից Հաճախորդի միջոցներին տիրապետման դեպքում այն քայլերի համառոտ նկարագիրը, որոնք ձեռք են առնված Հաճախորդի միջոցների պաշտպանությունը ապահովելու համար, ներառյալ Ընկերության կողմից ներդրողների փոխհատուցման, միջոցների երաշխավորման կամ նման այլ սխեմաներում մասնակցության մասին,

3.1.4.7. շահերի բախման սահմանափակման քաղաքականության համառոտ նկարագիրը (հաճախորդի պահանջի դեպքում՝ շահերի բախման քաղաքականության ամբողջ նկարագիրը):

3.1.5. Ընկերությունը Հաճախորդի միջոցներին տիրապետման դեպքում վերջինիս տեղեկացնում է նաև՝

3.1.5.1. այն մասին, որ Հաճախորդի միջոցները կարող են հաշվառվել անվանատիրոջ հաշվում կամ Ընկերության անունով բացված արժեթղթերի կամ բանկային հաշվում, ինչպես նաև այդ հաշիվներում պահելու հետ կապված ռիսկերը,

3.1.5.2. Հաճախորդի միջոցները Ընկերության անունից գրավադրման կամ փոխառությամբ տրամադրելու հնարավորության մասին, ինչպես նաև պահառուի կողմից Հաճախորդի միջոցները որպես վերջինիս պարտավորության կատարումն ապահովող միջոց հաշվառելու հնարավորության մասին,

3.1.5.3. Ընկերության պարտավորությունների մասին, եթե Հաճախորդի միջոցները փոխառությամբ տրամադրվում են կամ այլ կերպ օգտագործվում են ի շահ Ընկերության կամ այլ Հաճախորդի:

3.1.6. Ընկերությունը ծախսերի և միջնորդավճարների մասին Հաճախորդին տրամադրում է հետևյալ տեղեկատվությունը՝

3.1.6.1. Ընկերության ծառայություններից օգտվելու համար Հաճախորդի կողմից վճարման ենթակա համախառն գումարը՝ ներառյալ բոլոր միջնորդավճարները, ծախսերը և այլ վճարները, ինչպես նաև բոլոր հարկային վճարները, որոնք պահվում են Ընկերության կողմից՝ որպես հարկային գործակալ: Եթե հնարավոր չի լինում տեղեկացնել գանձման ենթակա ճշգրիտ գումարի մասին, ապա ներկայացվում է հաշվարկման կարգը,

3.1.6.2. եթե սույն Կանոնակարգի 3.1.6.1 ենթակետում նշված համախառն գումարի որևէ մաս վճարվում է արտարժույթով կամ ներկայացված է արտարժույթով, ապա նշվում է արտարժույթը, փոխանակման կուրսը և դրա հետ կապված ծախսերը,

3.1.6.3. վճարումներ կատարելու եղանակները:

3.1.7. Սույն Կանոնակարգի 3.1.5 - 3.1.6 կետերի պահանջները, բացի 3.1.5.2 ենթակետից, կարող են չպահպանվել պրոֆեսիոնալ Հաճախորդների դեպքում:

3.1.8. Արժեթղթերի փաթեթի կառավարման և/կամ արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրման ծառայության մատուցման դեպքում Ընկերության կողմից Հաճախորդին հավելյալ տեղեկատվության տրամադրումը կարգավորվում է համապատասխան ծառայության մատուցումը կարգավորող Ընկերության կանոնակարգերին և ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի հաստատած «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ին համաձայն:

3.2. *Հաճախորդներից պահանջվող տեղեկությունները*

3.2.1. Ներդրումային ծառայությունները մատուցելու շրջանակներում Ընկերությունը Հաճախորդից պահանջում է տեղեկատվություն իր կողմից մատուցվող ներդրումային ծառայության կամ արժեթղթի վերաբերյալ Հաճախորդի գիտելիքների և փորձի մասին՝ համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ 1-ի, որը հնարավորություն կտա գնահատել, թե արդյոք տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը համապատասխանում է հաճախորդի պահանջներին: Եթե Ընկերությունը Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա գտնում է, որ իր կողմից մատուցվող տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը չի համապատասխանում Հաճախորդի

պահանջներին, ապա զգուշացնում է Հաճախորդին այդ մասին: Այդ զգուշացումը ներկայացվում է Հաճախորդին համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ 4-ի:

3.2.2. Ընկերության կողմից արժեթղթերի փաթեթի կառավարման կամ արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրման դեպքում Հաճախորդից տեղեկություններ պահանջելու չափանիշները կարգավորվում են համապատասխան ծառայությունների մատուցումը կարգավորող Ընկերության կանոնակարգերին և ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի հաստատած «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ին համաձայն:

3.2.3. Այն դեպքում, երբ հաճախորդը չի տրամադրում սույն Կանոնակարգի 3.2.1 կետով պահանջվող տեղեկատվությունը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, ապա Ընկերությունը զգուշացնում է Հաճախորդին այն մասին, որ Հաճախորդի նման վարքագիծը թույլ չի տալիս գնահատել, թե արդյոք Ընկերության կողմից մատուցվող տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը համապատասխանում է Հաճախորդի պահանջներին: Այդ զգուշացումը Հաճախորդին ներկայացվում է համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ 5:

3.2.4. Այն դեպքում, երբ հաճախորդը չի տրամադրում սույն Կանոնակարգի 3.2.2 կետով պահանջվող տեղեկատվությունը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, ապա Ընկերությունը զգուշացնում է Հաճախորդին այն մասին, որ Հաճախորդի նման վարքագիծը թույլ չի տալիս գնահատել կամ խորհուրդ տալ այնպիսի ներդրումային ծառայություններ և արժեթղթեր, որոնք առավելագույնս համապատասխանում են Հաճախորդի ցանկությանը: Այդ զգուշացումը Հաճախորդին ներկայացվում է համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ 6:

3.2.5. Սույն Կանոնակարգի 3.2.1 և 3.2.2 կետերում նշված տեղեկությունները ստանալուց հետո Ընկերությունը որոշում է, թե արդյոք Հաճախորդն ունի ներդրումային գործունեության բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ և փորձ, որպեսզի հասկանա տվյալ ներդրումային ծառայությունից կամ արժեթղթից բխող ռիսկերը: Ընկերությունը համարում է, որ պրոֆեսիոնալ Հաճախորդը ունի այդ անհրաժեշտ գիտելիքները և փորձը:

3.2.6. Ընկերությունը հիմնվում է Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունների վրա, բացառությամբ եթե գիտեր կամ կարող էր իմանալ, որ տեղեկատվությունն ակնհայտորեն հնացած է, ոչ ճշգրիտ կամ ոչ լիարժեք:

3.2.7. Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և (կամ) 2-րդ կետերում նշված ծառայությունները առանձին կամ ոչ հիմնական ծառայությունների հետ մեկտեղ մատուցելիս Ընկերությունը իրավունք ունի Հաճախորդից չպահանջել նրա գիտելիքների և փորձի մասին տեղեկություններ միայն այն դեպքում, եթե բավարարարում են ստորև նշված պահանջները միաժամանակ՝

3.2.7.1. նշված ծառայությունները կապված են Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և կամ 4-րդ կետերում նշված արժեթղթերի հետ,

3.2.7.2. Ընկերությունը Հաճախորդին պարզ ձևով ներկայացրել է սույն բացառության կիրառման մասին:

3.3. Մինչև Ընկերության կողմից մատուցվող որևէ ծառայության վերաբերյալ Հաճախորդի հետ համապատասխան պայմանագիր կնքելը Ընկերությունը Հաճախորդին տրամադրում է նաև տվյալ ծառայության մատուցումը կարգավորող Ընկերության բոլոր իրավական ակտը(երը)՝ դրա(նց) հետ ծանոթանալու համար: Հաճախորդի հետ համապատասխան ծառայության մատուցման պահամանագրում

գրավոր նշվում է այն մասին, որ Հաճախորդը ծանոթ է Ընկերության կողմից մշակված և հաստատված տվյալ ծառայության մատուցումը կարգավորող կանոնակարգերին, այլ ներքին ակտերին և փաստաթղթերին, ինչպես նաև Ընկերության գործող Սակագներին:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4.1. Ընկերության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրերին ներկայացվող պահանջները և հաճախորդներին հաշվետվությունների տրամադրման կարգը կարգավորվում են համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի հաստատած «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ի, ինչպես նաև Ընկերության կողմից մշակված և հաստատված տվյալ ծառայությունների մատուցման ներքին կանոնակարգերի և այլ իրավական ակտերի ու փաստաթղթերի:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն Կանոնակարգի բոլոր լրացումներն ու փոփոխությունները հաստատվում են Ժողովի կողմից (եթե Ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ) և ուժի մեջ են մտնում Ժողովի կողմից հաստատման պահից:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(իրավաբանական անձանց դեպքում)

Ընկերության նկարագիրը	
1. Ընկերության անվանումը	
2. Կազմակերպաիրավական ձևը	
3. Գրանցման օր/ամիս/տարի	
4. Գրանցման երկիր և հասցե	
5. Գրանցող մարմին	
6. Գրանցման համար	
7. Հարկային ռեզիդենտության երկիր	
8. Հարկ վճարողի հաշվառման համարը	
	☐ Նշել, եթե ՀՎՀՀ ունենալն օրենքով պարտադիր չէ և բացատրել
9. Գործունեության հասցե(ներ)	
10. Արդյո՞ք ընկերությունը լիցենզավորված է ֆինանսական շուկայում ծառայություններ մատուցելու համար	☐ Ոչ ☐ Այո * Եթե այո, ապա նշեք այն գործունեություն(ներ)ը, որի(որոնց) համար ընկերությունը լիցենզավորված է
11. Արդյո՞ք ընկերությունը կարգավորվող է	☐ Ոչ ☐ Այո * Եթե այո, խնդրում ենք նշել կարգավորող մարմնի անվանումը Կարգավորող մարմնի կայքը
12. Նկարագրեք այն հիմնական գործունեությունը/գործառնությունները, որոնցով զբաղվում է ընկերությունը	

13. Արդյո՞ք ընկերության բաժնետոմսերը համարվում են ազատ շրջանառվող	☐ Ոչ ☐ Այո * Եթե բաժնետոսերը ցուցակված են, խնդրում ենք նշել, թե որ շուկայում են ցուցակված
14. Արդյո՞ք ընկերությունն ունի անվանատեր բաժնետեր(եր)	☐ Ոչ ☐ Այո
15. Արդյո՞ք ընկերությունը պատկանում է որևէ խմբի	☐ Ոչ ☐ Այո * Եթե այո, խնդրում ենք նշել խմբի անվանումը
16. **Կոնտակտային տվյալներ**	
Հեռախոսահամար(ներ)	
Էլ՝ փոստի հասցե(ներ)	
17. Ընկերության վեբ կայքը (առկայության դեպքում)	
18. Իրավաբանական անձի նույնացուցիչը (Legal Entity Identifier (LEI))	
19. GIIN, եթե կիրառելի է	

Գործադիր մարմնի ղեկավար

Անուն, ազգանուն, հայրանուն	
Պաշտոն	
Գրանցման հասցե	
Բնակության հասցե	
Անձնագրային տվյալներ	
Հանդիսանու՞մ եք/հանդիսացե՞լ եք արդյոք քաղաքական ազդեցություն ունեցող անձ կամ քաղաքական ազդեցություն ունեցող անձի ընտանիքի անդամ կամ փոխկապակցված անձ	☐ Ոչ ☐ Այո * Եթե այո, խնդրում ենք նշել երկիրը/միջազգային կազմակերպությունը, որտեղ աշխատում եք/աշխատել եք կամ աշխատում են/աշխատել են և զբաղեցրած պաշտոնը

Բաժնետիրական կառուցվածք

20. Նշեք կանոնադրական կապիտալում 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների անունները (անվանումները)	Մասնակցության մասնաբաժինը տոկոսով
1)	
2)	
3)	
4)	
5)	
21. Արդյո՞ք նշված մասնակիցներից որևէ մեկն ունի ԱՄՆ փոխկապակցվածություն ներքոնշյալներից որևէ մեկի տեսքով ☐ քաղաքացիություն ☐ ռեզիդենտություն/կացության իրավունք ☐ GREEN CARD ☐ ծնվել է ԱՄՆ-ում	☐ Ոչ ☐ Այո * Եթե այո, ապա նշեք ԱՄՆ փոխկապակցվածություն ունեցող մասնակցի(ների) անունը 1) 2) 3) 4) 5) * վերը նշված մասնակից(ներ)ը պետք է լրացնեն W9 ձևաթուղթը
22. Արդյոք Հաճախորդի կանոնադրական կապիտալում 20% և ավելի մասնակցություն ունեցող սեփականատերերի ցանկում կան քաղաքական ազդեցություն ունեցող անձինք:	☐ Ոչ ☐ Այո
23. Արդյոք Հաճախորդի կանոնադրական կապիտալում 20% և ավելի մասնակցություն ունեցող սեփականատերերի ցանկում կան քաղաքական ազդեցություն ունեցող անձի ընտանիքի անդամ կամ փոխկապակցված անձինք:	☐ Ոչ ☐ Այո

apricot.	ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	ՀԱՎԵԼՎԱԾ 1

Իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիր

* 20% ուղղակի կամ անուղղակի սեփականություն ունեցող անհատ(ներ)

1. Իրական շահառու

Անուն, ազգանուն, հայրանուն	
Անձնագրային տվյալներ	
Ծննդավայր	
Ծննդյան օր/ամիս/տարի	
Ազգություն	
Գրանցման հասցե	
Բնակության հասցե	
Կենսական շահերի կենտրոն	
Ռեզիդետնության երկիր	
Հարկային ռեզիդենտության երկիր	
Հարկ վճարողի հաշվառման համարը	
	☐ Նշել, եթե ՀՎՀՀ ունենալն օրենքով պարտադիր չէ, և տրամադրեք առկա այլ անհատական նույնականացման համար
Մասնակցության ձևը	☐ Ուղղակի ☐ Անուղղակի
Մասնակցության մասնաբաժինը տոկոսով	
Արդյո՞ք ունի իրավաբանական անձի կառավարման մարմիններում ներգրավվածություն	☐ Ոչ ☐ Այո * Եթե այո, ապա նշեք պաշտոնը
Հանդիսանու՞մ է/հանդիսացե՞լ է արդյոք քաղաքական ազդեցություն ունեցող անձ կամ քաղաքական ազդեցություն ունեցող անձի ընտանիքի անդամ կամ փոխկապակցված անձ	☐ Ոչ ☐ Այո * Եթե այո, խնդրում ենք նշել երկիրը/միջազգային կազմակերպությունը, որտեղ աշխատում եք/աշխատել եք կամ աշխատում են/աշխատել են և զբաղեցրած պաշտոնը

2. Իրական շահառու

apricot.	ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	ՀԱՎԵԼՎԱԾ 1

Անուն, ազգանուն, հայրանուն	
Անձնագրային տվյալներ	
Ծննդավայր	
Ծննդյան օր/ամիս/տարի	
Ազգություն	
Գրանցման հասցե	
Բնակության հասցե	
Կենսական շահերի կենտրոն	
Ռեզիդետնության երկիր	
Հարկային ռեզիդենտության երկիր	
Հարկ վճարողի հաշվառման համարը	
	☐ Նշել, եթե ՀՎՀՀ ունենալն օրենքով պարտադիր չէ, և տրամադրեք առկա այլ անհատական նույնականացման համար
Մասնակցության ձևը	☐ Ուղղակի ☐ Անուղղակի
Մասնակցության մասնաբաժինը տոկոսով	
Արդյո՞ք ունի իրավաբանական անձի կառավարման մարմիններում ներգրավվածություն	☐ Ոչ ☐ Այո * Եթե այո, ապա նշեք պաշտոնը
Հանդիսանու՞մ է/հանդիսացե՞լ է արդյոք քաղաքական ազդեցություն ունեցող անձ կամ քաղաքական ազդեցություն ունեցող անձի ընտանիքի անդամ կամ փոխկապակցված անձ	☐ Ոչ ☐ Այո * Եթե այո, խնդրում ենք նշել երկիրը/միջազգային կազմակերպությունը, որտեղ աշխատում եք/աշխատել եք կամ աշխատում են/աշխատել են և զբաղեցրած պաշտոնը

3. Իրական շահառու

Անուն, ազգանուն, հայրանուն	
Անձնագրային տվյալներ	
Ծննդավայր	
Ծննդյան օր/ամիս/տարի	

Ազգություն	
Գրանցման հասցե	
Բնակության հասցե	
Կենսական շահերի կենտրոն	
Ռեզիդետնության երկիր	
Հարկային ռեզիդենտության երկիր	
Հարկ վճարողի հաշվառման համարը	
	☐ Նշել, եթե ՀՎՀՀ ունենալն օրենքով պարտադիր չէ, և տրամադրեք առկա այլ անհատական նույնականացման համար
Մասնակցության ձևը	☐ Ուղղակի ☐ Անուղղակի
Մասնակցության մասնաբաժինը տոկոսով	
Արդյո՞ք ունի իրավաբանական անձի կառավարման մարմիններում ներգրավվածություն	☐ Ոչ ☐ Այո * Եթե այո, ապա նշեք պաշտոնը
Հանդիսանու՞մ է/հանդիսացե՞լ է արդյոք քաղաքական ազդեցություն ունեցող անձ կամ քաղաքական ազդեցություն ունեցող անձի ընտանիքի անդամ կամ փոխկապակցված անձ	☐ Ոչ ☐ Այո * Եթե այո, խնդրում ենք նշել երկիրը/միջազգային կազմակերպությունը, որտեղ աշխատում եք/աշխատել եք կամ աշխատում են/աշխատել են և զբաղեցրած պաշտոնը

4. Իրական շահառու

Անուն, ազգանուն, հայրանուն	
Անձնագրային տվյալներ	
Ծննդավայր	
Ծննդյան օր/ամիս/տարի	
Ազգություն	
Գրանցման հասցե	
Բնակության հասցե	
Կենսական շահերի կենտրոն	

Ռեզիդետնության երկիր	
Հարկային ռեզիդենտության երկիր	
Հարկ վճարողի հաշվառման համարը	
	☐ Նշել, եթե ՀՎՀՀ ունենալն օրենքով պարտադիր չէ, և տրամադրեք առկա այլ անհատական նույնականացման համար
Մասնակցության ձևը	☐ Ուղղակի ☐ Անուղղակի
Մասնակցության մասնաբաժինը տոկոսով	
Արդյո՞ք ունի իրավաբանական անձի կառավարման մարմիններում ներգրավվածություն	☐ Ոչ ☐ Այո * Եթե այո, ապա նշեք պաշտոնը
Հանդիսանու՞մ է/հանդիսացե՞լ է արդյոք քաղաքական ազդեցություն ունեցող անձ կամ քաղաքական ազդեցություն ունեցող անձի ընտանիքի անդամ կամ փոխկապակցված անձ	☐ Ոչ ☐ Այո * Եթե այո, խնդրում ենք նշել երկիրը/միջազգային կազմակերպությունը, որտեղ աշխատում եք/աշխատել եք կամ աշխատում են/աշխատել են և զբաղեցրած պաշտոնը

5. Իրական շահառու

Անուն, ազգանուն, հայրանուն	
Անձնագրային տվյալներ	
Ծննդավայր	
Ծննդյան օր/ամիս/տարի	
Ազգություն	
Գրանցման հասցե	
Բնակության հասցե	
Կենսական շահերի կենտրոն	
Ռեզիդետնության երկիր	
Հարկային ռեզիդենտության երկիր	
Հարկ վճարողի հաշվառման համարը	

	☐ Նշել, եթե ՀՎՀՀ ունենալն օրենքով պարտադիր չէ, և տրամադրեք առկա այլ անհատական նույնականացման համար
Մասնակցության ձևը	☐ Ուղղակի ☐ Անուղղակի
Մասնակցության մասնաբաժինը տոկոսով	
Արդյո՞ք ունի իրավաբանական անձի կառավարման մարմիններում ներգրավվածություն	☐ Ոչ ☐ Այո * Եթե այո, ապա նշեք պաշտոնը
Հանդիսանու՞մ է/հանդիսացե՞լ է արդյոք քաղաքական ազդեցություն ունեցող անձ կամ քաղաքական ազդեցություն ունեցող անձի ընտանիքի անդամ կամ փոխկապակցված անձ	☐ Ոչ ☐ Այո * Եթե այո, խնդրում ենք նշել երկիրը/միջազգային կազմակերպությունը, որտեղ աշխատում եք/աշխատել եք կամ աշխատում են/աշխատել են և զբաղեցրած պաշտոնը
☐ **Գործարար հարաբերության ընթացքում իրական շահառուի փոփոխության կամ նոր իրական շահառուի հայտնվելու դեպքում պարտավորվում եմ տեղեկացնել ԷՖՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ ՓԲԸ-ին:**	

Գործարար հարաբերության նկարագիր

24. ԷՖՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ ՓԲԸ-ի գործարար հարաբերության նպատակը	* Խնդրում ենք նկարագրել գործարքների այն հիմնական տեսակները, որոնք պատրաստվում եք իրականացնել ձեր բացվող հաշվով
25. Հաշվի ակնկալվող համալրման ծավալը	
26. Ո՞ր երկրից են փոխանցվելու միջոցները	
27. Հաշվում պահվող ակտիվների ակնկալվող ծավալը	
28. Գործարքների ակնկալվող քանակն ամսական կտրվածքով	☐ Մինչև 10 ☐ 10 – 50 ☐ 50 – 100 ☐ 100 և ավելի

29. Գործարքների ակնկալվող ծավալն ամսական կտրվածքով	
30. Ընկերության միջոցների ծագման աղբյուրը	* Խնդրում ենք կցել բոլոր օժանդակ փաստաթղթերը, որոնք վերաբերում են Ընկերության միջոցների ծագման աղբյուրին
31. Ի՞նչ ֆինանսական գործիքներով եք պատրաստվում կատարել գործարքներ բացվող հաշվով	
32. Հաշվի (հաշիվների) տեսակ(ներ)ը Ընկերությունը պատրաստվում եք բացել	☐ Հաշիվ սեփական միջոցների համար ☐ Հաշիվ հաճախորդների միջոցների համար

Ընկերության Կենսական շահերի կենտրոն

* Այս մասը լրացնում են միայն այն հաճախորդները, որոնք չեն հաղիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ

Ընկերության կենսական շահերի կենտրոնն է հանդիսանում

_____,

* նշել երկիրը

քանի որ

☐ ընկերությունը գրանցված է այնտեղ,

☐ ընկերությունը հոլդինգային խմբի անդամ է, որի մայր ընկերությունը գրանցված է այնտեղ,

☐ ընկերությունը հարկային ռեզիդենտ է այնտեղ,

☐ այլ _____

☐ **Գործնական հարաբերության ընթացքում կենսական շահերի կենտրոնի փոփոխության դեպքում պարտավորվում եմ տեղեկացնել ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ ՓԲԸ-ին**

Հաճախորդի գիտելիքների և փորձի գնահատման հարցաթերթիկ

* Պետք է լրացվի Ընկերության իրավասու ստորագրողի համար

** Այս մասը կարող են բաց թողնել այն ընկերությունները, որոնք լիցենզավորված են ֆինանսական շուկայում ծառայություններ մատուցելու համար

33. Ձեր կողմից արժեթղթերով կատարված գործարքների քանակը վերջին չորս եռամսյակների ընթացքում (միջին եռամսյակային կտրվածքով)

☐ Գործարքներ չեմ իրականացրել (0 միավոր)

☐ Մինչև 10 գործարք (2 միավոր)

☐ 10 և ավելի գործարք (5 միավոր)

34. Ձեր կողմից կատարված մեկ գործարքի ծավալը միջին հաշվով կազմում է

☐ Մինչև 5 մլն ՀՀ դրամ (3 միավոր)
☐ 5 – 10 մլն ՀՀ դրամ (4 միավոր)
☐ 10 մլն ՀՀ դրամ և ավելի (5 միավոր)

35. Որքա՞ն է կազմում տվյալ պահին Ձեր արժեթղթերի փաթեթի մեծությունը

☐ Չունեմ որևէ արժեթուղթ (0 միավոր)
☐ Մինչև 100 մլն ՀՀ դրամ (3 միավոր)
☐ 100 մլն ՀՀ դրամ և ավելի (5 միավոր)

36. Ֆինանսական շուկայում ներդրումային ծառայությունների մատուցմանն առնչվող Ձեր մասնագիտական աշխատանքային փորձը

☐ Նման փորձ չունեմ (0 միավոր)
☐ Մինչև 2 տարի (3 միավոր)
☐ 2 տարի և ավելի (5 միավոր)

37. Ո՞ր երկրներում ունեք ներդրումներ իրականացնելու փորձ (հնարավոր է ընտրել մի քանի տարբերակ)

☐ Նման փորձը բացակայում է (0 միավոր)
☐ ԱՊՀ երկրներ (1 միավոր)
☐ Եվրոպա (5 միավոր)
☐ ԱՄՆ (5 միավոր)
☐ Այլ (2 միավոր)

38. Կապիտալի շուկայի վերաբերյալ Ձեր գիտելիքները

☐ Որևէ գիտելիք չունեմ (0 միավոր)
☐ Ցածր - սահմանափակ ներդրումային փորձ, ներառյալ ընդհանուր բանկային գործարքներ (1 միավոր)
☐ Միջին - արժեթղթերի շուկայի վերաբերյալ ընդհանուր գիտելիքներ (2 միավոր)
☐ Բարձր - ներդրումային հարուստ փորձ, կապիտալի շուկայի խորը իմացություն (3 միավոր)
☐ Մասնագիտական փորձ - ներկայումս կամ անցյալում աշխատել եք որպես արժեթղթերի շուկայի վերլուծաբան, բրոքեր, փաթեթի կառավարիչ և/կամ զբաղվել եք նմանատիպ այլ գործունեությամբ (5 միավոր)

39. Ունե՞ք բավարար գիտելիքներ և փորձ գնահատելու այն բոլոր ռիսկերը, որոնք առկա են ներդրումներ իրականացնելու ժամանակ

☐ Այո (5 միավոր)
☐ Այո, սակայն ինձ անհրաժեշտ է որոշակի խորհրդատվություն (2 միավոր)
☐ Ոչ, ինձ անհրաժեշտ է մասնագիտական խորհրդատվություն (0 միավոր)

40. Ձեր կրթությունը
☐ Բարձրագույն տնտեսագիտական (4 միավոր)
☐ Այլ բարձրագույն (2 միավոր)
☐ Միջնակարգ (1 միավոր)
☐ Չունեմ (0 միավոր)

41. Ունե՞ք որակավորման վկայական ֆինանսների/ներդրումների հետ կապված ոլորտում (հնարավոր է ընտրել մի քանի տարբերակ)
☐ CFP, CFA, ChFC, CIMA կամ այլ համապատասխան որակավորման վկայական (5 միավոր)
☐ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված որակավորում կամ վկայական (3 միավոր)
☐ Չունեմ (0 միավոր)

42. Որ ներդրումային ծառայությունների հետ եք որևէ կերպ առնչվել (հնարավոր է ընտրել մի քանի տարբերակ)
☐ Բրոքերային ծառայություններ (3 միավոր)
☐ Դիլերային գործարքներ (3 միավոր)
☐ Այլ ներդրումային ծառայություններ (2 միավոր)
☐ Արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվություն (1 միավոր)
☐ Չեմ առնչվել (0 միավոր)

43. Ո՞ր արժեթղթերի հետ եք որևէ կերպ առնչվել (հնարավոր է ընտրել մի քանի տարբերակ)
☐ Ածանցյալ (5 միավոր)
☐ Բաժնային (2 միավոր)
☐ Պարտքային (2 միավոր)
☐ Այլ (1 միավոր)
☐ Չեմ առնչվել (0 միավոր)

44. Ձեր կողմից արժեթղթերով կատարված գործարքների բնույթը (հնարավոր է ընտրել մի քանի տարբերակ)
☐ Ռեպո (5 միավոր)
☐ Առք/վաճառք (2 միավոր)
☐ Այլ (1 միավոր)
☐ Որևէ գործարք չի իրականացվել (0 միավոր)

45. Արդյո՞ք ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 500 մլն ՀՀ դրամը նախորդ տարվա վերջի դրությամբ:
☐ Այո (5 միավոր)
☐ Ոչ (0 միավոր)

46. Արդյո՞ք ընկերության նախորդ տարվա իրացման շրջանառությունը գերազանցում է 1 մլրդ ՀՀ դրամը:
☐ Այո (5 միավոր)
☐ Ոչ (0 միավոր)

47. Արդյո՞ք ընկերության ընդհանուր կապիտալը նախորդ ամսվա վերջի դրությամբ (եթե հայտնի չէ, վերջին ամսվան նախորդող ամսվա դրությամբ) գերազանցում է 50 մլն ՀՀ դրամը

☐ Այո (5 միավոր)

☐ Ոչ (0 միավոր)

☐ Սույնով հայտնում եմ, որ «ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի հետ գործարար հարաբերությունների հիման վրա իրականացվող գործարքների գումարները չեն հանդիսանում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման աղբյուր: Ըստ անհրաժեշտության պարտավորվում եմ «ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ին ներկայացնել հիմնավորող փաստաթղթեր:
Միաժամանակ սույնով տեղեկացնում եմ, որ ծանոթ եմ « ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն առնչվող ներքին կանոններին, որոնք ինձ համար ընդունելի են:

☐ Հավաստիացնում եմ, որ ներկայացված տեղեկատվությունից և/կամ փաստաթղթերից բացի չեմ տիրապետում որևէ այլ տեղեկատվության և/կամ փաստաթղթի, որն անհրաժեշտ եմ համարում գործարար հարաբերության հաստատման համար: Ամբողջությամբ կրում եմ նման տեղեկատվության առկայության և չտրամադրման ռիսկն ու պատասխանատվությունը:
Միաժամանակ հավաստիացնում եմ, որ սույն դիմումին կից փոխանցվող փաստաթղթերում պարունակվող տեղեկությունները ստույգ են և լիովին գիտակցում եմ, որ նրանում որևէ էական փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը կարող է հանգեցնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցների կիրառմանը:

☐ Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ ՓԲԸ-ին մշակել տրամադրված տվյալները՝ անհրաժեշտ ստուգումներ իրականացնելու նպատակով՝ որպես պատշաճ ուսումնասիրության ընթացակարգի մաս: Սա ներառում է (բայց չի սահմանափակվում) անձնագրերիի վավերականության ստուգում, պատժամիջոցների ցուցակներում և այլ դիտացանկերում ներառված լինելու վերաբերյալ ստուգումների անցկացում, տրամադրված մանրամասների ճշգրտության հաստատում և կիրառելի օրենքներին ու կանոնակարգերին համապատասխանության ապահովում:

Գործադիր մարմնի ղեկավար: _____

Անուն ազգանուն: _____ _____

(Signature/Seal)

_____

(օր/ամիս/տարի)

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ
ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(ֆիզիկական անձանց դեպքում)

Հաճախորդի նկարագիրը	
1. Անուն, ազգանուն, հայրանուն	
2. Ծննդյան օր/ամիս/տարի	
3. Նշել բոլոր այն երկրները, որոնց քաղաքացի եք հանդիսանում	
4. Ունե՞ք արդյոք կացության թույլտվություն այլ երկրում (երկրներում), բացի վերը նշվածներից	☐ Ոչ ☐ Այո
	* Եթե այո, ապա նշեք երկիրը (երկրները)
5. Ռեզիդետնության երկիր	
6. Հարկային ռեզիդենտության երկիր	
7. Հարկ վճարողի հաշվառման համարը	
	☐ Նշել, եթե ՀՎՀՀ ունենալն օրենքով պարտադիր չէ
8. Այլ անհատական նույնականացման համար բացի ՀՎՀՀ-ից, եթե կիրառելի է	
9. Գրանցման հասցե	
10. Բնակության հասցե	
11. Նշել զբաղվածության տեսակը	☐ Աշխատում եմ (այդ թվում ԱՁ) ☐ Չեմ աշխատում
	* Եթե աշխատում եք, ապա նշեք ընկերությունը և Ձեր հաստիքը
	* Եթե անհատ ձեռնարկատեր եք, խնդրում ենք նշել ոլորտը
12. Հանդիսանու՞մ եք/հանդիսացե՞լ եք արդյոք քաղաքական ազդեցություն ունեցող	☐ Ոչ ☐ Այո

անձ կամ քաղաքական ազդեցություն ունեցող անձի ընտանիքի անդամ կամ փոխկապակցված անձ	* Եթե այո, խնդրում ենք նշել երկիրը/միջազգային կազմակերպությունը, որտեղ աշխատում եք/աշխատել եք կամ աշխատում են/աշխատել են և զբաղեցրած պաշտոնը
14. **Կոնտակտային տվյալներ**	
Հեռախոսահամար(ներ)	
Էլ՝ փոստի հասցե(ներ)	
15. Արդյոք ունե՞ք ԱՄՆ փոխկապակցվածություն	☐ Ոչ ☐ Այո
	Եթե այո, նշեք կիրառելի կետերը ☐ քաղաքացիություն ☐ ռեզիդենտություն/կացության իրավունք ☐ GREEN CARD ☐ ծնվել եմ ԱՄՆ-ում
16. Ամուսնական կարգավիճակը	☐ Ամուսնացած ☐ Չամուսնացած
	* Եթե ամուսնացած եք, խնդրում ենք նշել ամուսնու/կնոջ ԱՄՆ փոխկապակցվածությունը (եթե կիրառելի է) ☐ քաղաքացիություն ☐ ռեզիդենտություն/կացության իրավունք ☐ GREEN CARD ☐ ծնվել է ԱՄՆ-ում

Իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիր

* Խնդրում ենք նշել ստորև վանդակը, եթե դուք հանդիսանում եք ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ ՓԲԸ-ի հետ գործարար հարաբերության իրական շահառուն

☐ **Ես հաստատում եմ, որ ես հանդիսանում եմ ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ ՓԲԸ-ում բացվող հաշվի միակ շահառուն, և որևէ այլ շահառու գոյություն չունի այս գործարար հարաբերությունում:**

☐ **Գործարար հարաբերության ընթացքում իրական շահառուի փոփոխության կամ նոր իրական շահառուի հայտնվելու դեպքում պարտավորվում եմ տեղեկացնել ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ ՓԲԸ-ին:**

Գործարար հարաբերության նկարագիր

17. ԷՖՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ ՓԲԸ-ի գործարար հարաբերության նպատակը	* Խնդրում ենք նկարագրել գործարքների այն հիմնական տեսակները, որոնք պատրաստվում եք իրականացնել ձեր բացվող հաշվով
18. Հաշվի ակնկալվող համալրման ծավալը	
19. Ո՞ր երկրից են փոխանցվելու միջոցները	
20. Հաշվում պահվող ակտիվների ակնկալվող ծավալը	
21. Գործարքների ակնկալվող քանակն ամսական կտրվածքով	☐ Մինչև 20 ☐ 20 և ավելի
22. Գործարքների ակնկալվող ծավալն ամսական կտրվածքով	
23. Ի՞նչ ֆինանսական գործիքներով եք պատրաստվում կատարել գործարքներ բացվող հաշվով	
24. Ձեր միջոցների ծագման աղբյուրը	☐ Աշխատավարձ ☐ Տոկոսային եկամուտներ ☐ Շահաբաժիններ , * եթե ընտրել եք շահաբաժիններ, խնդրում ենք նշել, թե որ ընկերությունից եք շահաբաժիններ ստանում ☐ Արժեթղթերի առևտրից եկամուտ ☐ Այլ (նշել) * Խնդրում ենք կցել բոլոր օժանդակ փաստաթղթերը, որոնք վերաբերում են ձեր միջոցների ծագման աղբյուրին

Կենսական շահերի կենտրոն

* Այս հատվածը լրացնում են միայն այն հաճախորդները, որոնք չեն հաղիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ

Իմ կենսական շահերի կենտրոնն է հանդիսանում _____,
*նշել երկիրը

քանի որ

☐ բնակվում եմ այնտեղ,
☐ ընտանիքս բնակվում է այնտեղ,
☐ բնակելի տունս գտնվում է այնտեղ,
☐ անձնական հիմնական գույքս գտնվում է այնտեղ,
☐ ընտանեկան հիմնական գույքս գտնվում է այնտեղ,
☐ հանդիսանում է իմ տնտեսական գործունեության հիմնական վայրը,
☐ հանդիսանում է իմ մասնագիտական գործունեության հիմնական վայրը,
☐ այլ _____:

apricot.	ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	ՀԱՎԵԼՎԱԾ 1

☐ **Գործնական հարաբերության ընթացքում կենսական շահերի կենտրոնի փոփոխության դեպքում պարտավորվում եմ տեղեկացնել ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ ՓԲԸ-ին**

Հաճախորդի գիտելիքների և փորձի գնահատման հարցաթերթիկ

25. Ձեր կողմից արժեթղթերով կատարված գործարքների քանակը վերջին չորս եռամսյակների ընթացքում (միջին եռամսյակային կտրվածքով)
☐ Գործարքներ չեմ իրականացրել (0 միավոր)
☐ Մինչև 10 գործարք (2 միավոր)
☐ 10 և ավելի գործարք (5 միավոր)

26. Ձեր կողմից կատարված մեկ գործարքի ծավալը միջին հաշվով կազմում է
☐ Մինչև 5 մլն ՀՀ դրամ (3 միավոր)
☐ 5 – 10 մլն ՀՀ դրամ (4 միավոր)
☐ 10 մլն ՀՀ դրամ և ավելի (5 միավոր)

27. Որքա՞ն է կազմում տվյալ պահին Ձեր արժեթղթերի փաթեթի մեծությունը
☐ Չունեմ որևէ արժեթուղթ (0 միավոր)
☐ Մինչև 100 մլն ՀՀ դրամ (3 միավոր)
☐ 100 մլն ՀՀ դրամ և ավելի (5 միավոր)

28. Ֆինանսական շուկայում ներդրումային ծառայությունների մատուցմանն առնչվող Ձեր մասնագիտական աշխատանքային փորձը
☐ Նման փորձ չունեմ (0 միավոր)
☐ Մինչև 2 տարի (3 միավոր)
☐ 2 տարի և ավելի (5 միավոր)

29. Ո՞ր երկրներում ունեք ներդրումներ իրականացնելու փորձ (հնարավոր է ընտրել մի քանի տարբերակ)
☐ Նման փորձը բացակայում է (0 միավոր)
☐ ԱՊՀ երկրներ (1 միավոր)
☐ Եվրոպա (5 միավոր)
☐ ԱՄՆ (5 միավոր)
☐ Այլ (2 միավոր)

30. Կապիտալի շուկայի վերաբերյալ Ձեր գիտելիքները
☐ Որևէ գիտելիք չունեմ (0 միավոր)
☐ Ցածր - սահմանափակ ներդրումային փորձ, ներառյալ ընդհանուր բանկային գործարքներ (1 միավոր)
☐ Միջին - արժեթղթերի շուկայի վերաբերյալ ընդհանուր գիտելիքներ (2 միավոր)
☐ Բարձր - ներդրումային հարուստ փորձ (3 միավոր)
☐ Մասնագիտական փորձ (5 միավոր)

31. Ունե՞ք բավարար գիտելիքներ և փորձ գնահատելու այն բոլոր ռիսկերը, որոնք առկա են ներդրումներ իրականացնելու ժամանակ
☐ Այո (5 միավոր)
☐ Այո, սակայն ինձ անհրաժեշտ է որոշակի խորհրդատվություն (2 միավոր)
☐ Ոչ, ինձ անհրաժեշտ է մասնագիտական խորհրդատվություն (0 միավոր)

32. Ձեր կրթությունը
☐ Բարձրագույն տնտեսագիտական (4 միավոր)
☐ Այլ բարձրագույն (2 միավոր)
☐ Միջնակարգ (1 միավոր)
☐ Չունեմ (0 միավոր)

33. Ունե՞ք որակավորման վկայական ֆինանսների/ներդրումների հետ կապված ոլորտում (հնարավոր է ընտրել մի քանի տարբերակ)

☐ CFP, CFA, ChFC, CIMA կամ այլ համապատասխան որակավորման վկայական (5 միավոր)
☐ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված որակավորում կամ վկայական (3 միավոր)
☐ Չունեմ (0 միավոր)

34. Որ ներդրումային ծառայությունների հետ եք որևէ կերպ առնչվել (հնարավոր է ընտրել մի քանի տարբերակ)
☐ Բրոքերային ծառայություններ (3 միավոր)
☐ Այլ ներդրումային ծառայություններ (2 միավոր)
☐ Արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվություն (1 միավոր)
☐ Չեմ առնչվել (0 միավոր)

35. Ո՞ր արժեթղթերի հետ եք որևէ կերպ առնչվել (հնարավոր է ընտրել մի քանի տարբերակ)
☐ Ածանցյալ (5 միավոր)
☐ Բաժնային (2 միավոր)
☐ Պարտքային (2 միավոր)
☐ Այլ (1 միավոր)
☐ Չեմ առնչվել (0 միավոր)

36. Ձեր կողմից արժեթղթերով կատարված գործարքների բնույթը (հնարավոր է ընտրել մի քանի տարբերակ)
☐ Առք/վաճառք (2 միավոր)
☐ Այլ (1 միավոր)
☐ Որևէ գործարք չի իրականացվել (0 միավոր)

☐ Սույնով հայտնում եմ, որ «ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի հետ գործարար հարաբերությունների հիման վրա իրականացվող գործարքների գումարները չեն հանդիսանում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման աղբյուր: Ըստ անհրաժեշտության պարտավորվում եմ «ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ին ներկայացնել հիմնավորող փաստաթղթեր:

apricot.	ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	ՀԱՎԵԼՎԱԾ 1

Միաժամանակ սույնով տեղեկացնում եմ, որ ծանոթ եմ «ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն առնչվող ներքին կանոններին, որոնք ինձ համար ընդունելի են:

☐ Հավաստիացնում եմ, որ ներկայացված տեղեկատվությունից և/կամ փաստաթղթերից բացի չեմ տիրապետում որևէ այլ տեղեկատվության և/կամ փաստաթղթի, որն անհրաժեշտ եմ համարում գործարար հարաբերության հաստատման համար: Ամբողջությամբ կրում եմ նման տեղեկատվության առկայության և չտրամադրման ռիսկն ու պատասխանատվությունը: Միաժամանակ հավաստիացնում եմ, որ սույն դիմումին կից փոխանցվող փաստաթղթերում պարունակվող տեղեկությունները ստույգ են և լիովին գիտակցում եմ, որ նրանում որևէ էական փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը կարող է հանգեցնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցների կիրառմանը:

☐ Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը «ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ին մշակել իմ անձնական տվյալները՝ անհրաժեշտ ստուգումներ իրականացնելու նպատակով՝ որպես պատշաճ ուսումնասիրության ընթացակարգի մաս: Սա ներառում է (բայց չի սահմանափակվում) իմ անձնագրի վավերականության ստուգում, պատժամիջոցների ցուցակներում և այլ դիտացանկերում ներառված լինելու վերաբերյալ ստուգումների անցկացում, իմ տրամադրած մանրամասների ճշգրտության հաստատում և կիրառելի օրենքներին ու կանոնակարգերին համապատասխանության ապահովում:

Հաճախորդ

Անուն ազգանուն _____ _____ օր/ամիս/տարի

(Ստորագրություն)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հաճախորդի «Գիտելիքների և փորձի գնահատման թեստ»ի լրացման արդյունքներով Հաճախորդը՝

_____

(Ա.Ա.Հ. և անձնագրային տվյալներ (եթե իրավաբանական անձ է, ապա կազմակերպության անվանումը և լիազորված անձի Ա.Ա.Հ.-ն և անձնագրային տվյալները))

հավաքեց _____ միավոր:

Գործադիր տնօրեն՝ _____ _____

Ստորագրություն

անուն, ազգանուն

Կ.Տ.

«____» «_____» _____թ.

*Դրական է համարվում 70 և ավել միավոր արդյունքը

Տեղեկացնում ենք, որ ներդրումային ծառայություններից որևէ մեկի կամ բոլոր ծառայությունների մասով, կամ որևէ գործարքի կամ արժեթղթերի որևէ տեսակով (դասով) գործարքների մասով որպես պրոֆեսիոնալ դասակարգվելու դեպքում ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 8/04/2008թ. թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ի համապատասխան որոշակի պահանջներ չեն գործելու Ընկերության և Հաճախորդի փոխհարաբերություններում:

Ելնելով ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 8/04/2008թ. թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ի պահանջներից՝ «ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ն, որպես արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություններ մատուցող անձ,

_____

_____ -ին

(նշվում է հաճախորդի Ա.Ա.Հ./անվանում)

_____

_____ *(նշվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում նշված ներդրումային ծառայություններից որևէ մեկի կամ բոլոր ծառայությունների, կամ որևէ գործարքի կամ արժեթղթերի որևէ տեսակով (դասով) գործարքների անվանումը)*

մասով դասակարգում է որպես՝

☐ Պրոֆեսիոնալ ☐Ոչ պրոֆեսիոնալ

Դասակարգման հիմք՝

☐ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 8/04/2008թ. թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ով սահմանված չափանիշներ

☐ Հաճախորդի «Գիտելիքների և փորձի գնահատման» թեստի արդյունքներ

Լրացուցիչ մեկնաբանություններ (առկայության դեպքում)

_____

_____

Հաճախորդի նշումներ՝

☐ Տեղյակ ենք/եմ, որ որևէ ծառայության կամ որևէ գործարքի մասով որպես պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգվելու դեպքում հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական որոշակի պահանջներ չեն գործելու մեր/իմ նկատմամբ տվյալ ծառայության կամ գործարքի մասով, և այդ պատճառով մենք/ես կորցնում եմ որոշակի պաշտպանվածություն

☐ Համաձայն ենք/եմ դասակարգվել որպես պրոֆեսիոնալ հաճախորդ վերոնշյալ ծառայության կամ գործարքի մասով

☐ Համաձայն չենք/չեմ դասակարգվել որպես պրոֆեսիոնալ հաճախորդ վերոնշյալ ծառայության կամ գործարքի մասով

_____ _____

(Հաճախորդի անուն, ազգանուն/պաշտոն) (ստորագրություն)

Կ.Տ.

«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝ _____ Կ.Տ.

(ստորագրություն)

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Ելնելով ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 8/04/2008թ. թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ի և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի պահանջներից՝ «ԷՓՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ն, որպես արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություններ մատուցող անձ, սույնով _____ -ին

(նշվում է հաճախորդի Ա.Ա.Հ./անվանում)

նախազգուշացնում է, որ

_____

(նշվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում նշված ներդրումային ծառայությունը և/կամ կարժեթղթերի անվանումը)

չի համապատասխանում նրա պահանջներին՝ հիմք ընդունելով վերջինիս կողմից Ընկերությանը տրամադրված տեղեկատվությունը:

Սույն նախազգուշացումը կազմված է 2 օրինակից, որից մեկը տրվում է Հաճախորդին, իսկ մյուսը մնում է Ընկերության մոտ:

«ԷՓՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ
Գործադիր տնօրեն՝ _____ Կ.Տ.
(ստորագրություն)

_____ _____
(Հաճախորդի անուն, ազգանուն/Անվանում) *(ստորագրություն)*
Կ.Տ.

«____»_____ ___թ.

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Ելնելով ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 8/04/2008թ. թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ի և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի պահանջներից՝ «ԷՖՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ն, որպես արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություններ մատուցող անձ, սույնով _____ -ին

(նշվում է հաճախորդի Ա.Ա.Հ./անվանում)

նախազգուշացնում է, որ վերջինիս կողմից տրամադրվող տեղեկատվությունը թույլ չի տալիս գնահատել, թե արդյո՞ք

_____

(նշվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում նշված ներդրումային ծառայությունը և/կամ կարժեթղթերի անվանումը)

համապատասխանում է նրա պահանջներին՝ հիմք ընդունելով Հաճախորդի կողմից Ընկերությանը տրամադրված տեղեկատվությունը:

Սույն նախազգուշացումը կազմված է 2 օրինակից, որից մեկը տրվում է Հաճախորդին, իսկ մյուսը մնում է Ընկերության մոտ:

«ԷՖՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ
Գործադիր տնօրեն՝ _____ Կ.Տ.
(ստորագրություն)

_____ _____
(Հաճախորդի անուն, ազգանուն/Անվանում) *(ստորագրություն)*
Կ.Տ.

«___»_____ ___թ.

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Ելնելով ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 8/04/2008թ. թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ի և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի պահանջներից՝ «ԷՓՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ն, որպես արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություններ մատուցող անձ, սույնով _____ -ին

(նշվում է հաճախորդի Ա.Ա.Հ./անվանում)

նախազգուշացնում է, որ վերջինիս կողմից տրամադրվող տեղեկատվությունը թույլ չի տալիս առաջարկել կամ խորհուրդ տալ այնպիսի ներդրումային ծառայություններ և արժեթղթերի, որոնք առավելագույնս համապատասխանում են նրա ցանկությանը՝ հիմք ընդունելով Հաճախորդի կողմից Ընկերությանը տրամադրված տեղեկատվությունը:

Սույն նախազգուշացումը կազմված է 2 օրինակից, որից մեկը տրվում է Հաճախորդին, իսկ մյուսը մնում է Ընկերության մոտ:

«ԷՓՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ
Գործադիր տնօրեն՝ _____ Կ.Տ.
(ստորագրություն)

_____ _____
(Հաճախորդի անուն, ազգանուն/Անվանում) *(ստորագրություն)*
Կ.Տ.

«___»_____ ___թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լեվերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների ռիսկայնության տեղեկացվածության վերաբերյալ

Ես՝ ----------,

անվանումը, կազմակերպական-իրավական ձևը (անունը, ազգանունը, հայրանունը)

տեղյակ եմ, որ լեվերիջով գործարքները, այդ թվում՝ ֆորեքս գործարքներն ունեն բարձր ռիսկայնություն, և այս գործարքների կնքումը համապատասխանում է միայն այն հաճախորդներին, որոնք պատրաստ են կորցնել իրենց կողմից նախապես ներդրված ապահովվածության գումարը (մարժան): Գիտակցում եմ նաև, որ այս գործարքներին բնորոշ են զգալի գնային տատանումներ, որոնց արդյունքում կարող եմ ինչպես բարձր եկամուտներ ստանալ, այնպես էլ զգալի կորուստներ կրել:

_____

(ստորագրություն)

_____ _____ 20 թ.